



# ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ



891 995  
Հ - 30

ՊԵՏՂԱՏ

30 MAY 2011

891.994  
2-30 us

# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(ՏԱՐՎԱ ՉՈՐՍ ՅԵՂԱՆԱԿՆԵՐ)

ՃՈՂՈՎԱԾՈՒ

Կազմեց Ա. ՀԱՅՐՅԱՆ  
Նկարները Գ. ԲՐՈՒՏՅԱՆԻ

ՊԵՏՏՐԱՏ

ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ 1938

ՉՈՐՍ ՅԵՂԱՆԱԿ

1

Որը տաք է... ձյունը հալվեց արևից,  
Քչքչալով ջուր է հոսում գոնեբրից.  
Սար ու ձորեր զարգարվեցին կանաչով,  
Դաշտը ծածկվեց վոչխարների հոտերով:  
Հա, հա, հա, գարուն է.  
Տեսեք, ինչպես սիրուն է...

2

Սաստիկ շոգ է. ցորեն, գարի հասել են,  
Հնձողները խոտը քաղել, զիզել են.  
Ծառերը վողջ ծածկվել են տերևով,  
Պտուղները «ձիկ» են անում ժպտալով:  
Հո, հո, հո, ամառ է.  
Արևը խիստ կվառե...

3

Շողերն անցան. պտուղները քաղեցին,  
Հացով մրգով ամբարները լցվեցին,  
Յերկինքն ամպեց, բարակ անձրև է մաղում  
Մերկ դաշտերը և ծառերը վողջում:  
Եյ, էյ, էյ, աշուն է.  
Տեսեք, ինչպես նախշուն է...



3014

38

Որը կարճ է, արև չկա, շատ ցուրտ է,  
 ձերմակ ձյունը քուլա-քուլա կբրդե.  
 Մարդ, անասուն բուք բորանից վախեցած,  
 Տաք-տաք տներ, խոր-խոր բներ են մտած:  
 Ոյ, ոյ, ոյ, ձմեռն է.  
 Անտանելի մի բեռն է...

Ղ. ԱՂԱՅՍՆ



ՋՄԵՌՎԱ ԻՐԻԿՈՒՆԸ

Հողմը մեզով յերկիրնքն առնում,  
Գալարում է բուքը ձյան,  
Մին՝ մանկան պես լաց է լինում,  
Մին՝ վռնում է վոնց գազան,  
Մին՝ վայրենի սուլում պեսպես,  
Աղմկում է տանիքում,  
Մին՝ ուշացած ճամբորդ, ասես՝  
Հուսամուտն է նա թափում:

Մեր խըրճիթը, աղքատ ու հին,  
Յե՛վ մըթին է, և՛ տխուր,  
— Ի՞նչ էս նըստել պատի տակին,  
Ի՞մ պառավըս այդպես լուռ:  
Հոգնել էս դու փոթորիկի  
Վտանոցներից խելագար,  
Թե՛ նիրհում ես քո իլիկի  
Բըզզոցի տակ միալար:

— Արի խմենք, բարի ընկեր,  
Ի՞մ սև, շահել որերի,  
Խմենք դարգից, բաժակըդ բեր,  
Սրաներս բաց կը լինի:

Յերգիր, վոնց եր ապրում խաղաղ  
Հավքը ծովի են ափին,  
Յերգիր, վոնց եր աղջիկը վաղ  
Ջուրը գնում մինչ արփին:

Հողմը մեզով լերկինքն առնում,  
Գալարում և բուքը ձյան,  
Մին՝ մանկան պես լաց և լինում,  
Մին՝ վռոնում և վոնց գազան:

— Արի խմենք, բարի ընկեր,  
Իմ սև՝ ջահել որերի,  
Խրմենք դարդից, բաժակըդ բեր,  
Սրտներս բաց կը լինի:

Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆ

### ԱՌԱՋԻՆ ԶՅՈՒՆԸ

— Վայ, մայրիկ ջան, տե՛ս  
Բակն ու դուռը լի  
Ի՞նչքան սպիտակ  
Թիթեռ և գալի...  
Եսքան շատ թիթեռ  
Չեմ տեսել յես դեռ:

— Չե, իմ անուշիկ,  
Թիթեռներ չեն ետ.  
Թիթեռներն անցան  
Ծաղիկների հետ:  
Ետ ձյունն և գալի,  
Փաթիլն և ձյունի,  
Վոր կարծես սպիտակ  
Թիթեռնիկ լինի:

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

## ՄԻ ԲԱՅ ՆԱՄԱԿ ԱՄԵՆՔԻՆ

Դաշտ ու անտառ, գյուղի ճամփան  
Ծածկվել է մի թիզ ձյունով.  
Ել չի ճարվում ուտելու բան,  
Ո՞վ է տեսել ես տեսակ սով.  
Վնչ մի ցորեն, վնչ մի հատիկ...  
Խնդրում ենք ձեզ, բարի մարդիկ,  
Շնորհեցեք մի կտոր հաց  
Կոտորվեցինք, մեռանք սոված:  
Շուտով կզան օրեր գարնան,  
Մենք ձեզ համար կերգենք զվարթ  
Ու փոխարեն ձեր լավության  
Ձեր պարտեզը, այգին ու արտ  
Կմաքրենք մենք, թրթուռներից,  
Ճիճուներից ու վորդերից.  
Միայն հիմի մի կտոր հաց,  
Կոտորվեցինք, մեռանք սոված:

Մի խումբ ծառերի կողմից,  
Ծիսիկ ձնեղուկյան  
ՀՈՎ.Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

## ԾԱՂԻԿՆԵՐԸ

— Ո՞ւր գնացին ծաղիկները:  
— Մնա, քնած են հողի տակ,  
Տար ծածկված վողջ ձմեռը  
Ձյուն-ծածկոցով սպիտակ:

Կըգա գարնան արևն ել յեա  
Իր շողերով կենդանի  
Ձմրան սաստիկ ցրտերի հետ  
Ձյուն-ծածկոցը կըտանի:

«Յեղեք, կասի, իմ մանուկներ».  
Ու հենց նրանք իմանան,  
Դուրս կը հանեն գլխիկները,  
Աչիկները կը բանան:

ՀՈՎ.Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՓՈՔՐԻԿ ԳՅՈՒՂԱՑԻՆ

Մի անգամ, ձմրան ճրքճրքան ցրտին  
Անտառից յերա—սառ-սառնամանիք.  
Տեսա՛նտառից դեպի՛ սարնիվեր  
Դանդաղ գալիս ե ձին՝ ցախը բարձած:

Ընկած առաջը տղամարդու պես,  
Քաշում ե սանձը մի փոքրիկ տղա՛  
Մեծ կոշիկներով, մուշտակը բրդոտ,  
Ձեռնոցները մեծ, ինքը՝ թիզ ու կես:

— Բարև՛, յեղբայրս  
«Գնա քո ճամբեն»:

— Դու շատ խիտան ես, ինչպես տեսնում եմ.  
Վճրատեղից բարձած բերում ես ցախը:

«Իհնարկե՛ մերուց: Հայրս, լսում ես,  
Կարում ե այնտեղ, յես ել կրում եմ»:

— Ե, ինչ, շատ մեծ ե ձեր ընտանիքը:  
«Այո՛, փոքր չի, բայց տղամարդիկ  
Միայն յերկուսս ենք՝ հայրիկս և յես»:

— Այ թե բանն ինչ ե: Անսունդ: — «Պողոս»:

— Տարիդ քանիսն ե: — «Վեցս անցել ե»:

— «Դե՛հ ջանս», — գոչեց փոքրիկը ձիուն,  
Թափ տվեց սանձն ու արագ քայլեց:

Փոխ. Ա.Թ. ԽՆԿՈՅԱՆ

ՃՊՈՒՌՆ ՈՒ ՄՐՋՅՈՒՆԸ

Թուի-վոի  
Մի ճպուռ,  
Վողջ ամառը  
Շուռ ու մուռ,  
Յերգեց, ճոռաց,  
Ճոճոռաց.  
Մին ել, ըն՛ը՛,  
Չմեռը  
Փոեց իրա  
Թևերը,  
Բացեց գորգը  
Սպիտակ,  
Դաշտերն առավ  
Չյունի տակ:  
Անցան պայծառ  
Որերը:  
Ել վճրն ասեմ,  
Ել վճրը.  
Յերբ ամեն մի  
Թփի տակ  
Թե սեղան կար,  
Թե ոթյակ:  
Յեկան որեր  
Յրտաշունչ.  
Ճպուռն ընկավ

Լուռ ու մունջ.  
Դազցած փորին  
Ել ի՛նչ յերգ.  
Յուրտը տարավ  
Վոտ ու ձեռք:  
Չընգր-զընգր  
Դողալով,  
Ծանր-ծանր  
Սողալով,  
Նա մըջյունին  
Ասում եր.  
— Գլխիդ մատաղ  
Սանամեր,  
Մի ճար արա՛  
Շունչ անեմ,  
Յրտից, սովից  
Չմեռնեմ.  
Կերակրի,  
Տաքացրու,  
Մինչև գարուն  
Ապրեցրու:  
— Ի՛նչ խաբար ե,  
Սանիկս,  
Չարմանում եմ  
Չանիկս.



Չաշխատեցիր  
Ամառը,  
Աստ, ի՞նչ եր  
Պատճառը:  
— Եղպես բանի,  
Սանամեր,  
Ել ժամանակ  
Ո՞վ ուներ.  
Են խոտերում  
Բուրավետ  
Յերգում եյինք  
Մերոնց հետ:

— Ուրեմն, գու...  
— Այո, չես  
Վողջ ամառը  
Դեն ու դես  
Յերգում եյի  
Մշտապես:  
— Յերգում եյիր...  
Շատ բարի.  
Այժմ ել բռնի  
Վեր-վերի,  
Բամին ծափ տա,  
Դու պարի:

Փոխ. Ա.Փ. ԽՆԿՈՅԱՆ

## Զ Մ Ե Ռ

Ծառը մերկացավ,  
Զրկվեց տերևից.  
Զյունի փաթիլներ  
Իջան ամպերից:

Զյուն ու ցուրտ յեկան,  
Առու, գետ լսեց.  
Իբ սպիտակ գորգը  
Զմեռը փռեց:

Զյունը ծրնկահար  
Նստեց մեծ ձամփին,  
Սպիտակ հյուսերը  
Կիտեց գետափին:

Ծառեր ու թփեր  
Զմեռն արծաթեց,  
Սար ու ձոր ընկավ,  
Կալեց ու կապեց:

Ա.Փ. ԽՆԿՈՅԱՆ

ԴՊՐՈՑԻ ՃԱՄԲԱՆ

Ձմեռվա բուքին,  
Սառնամանիքին,  
Դպրոցի ճամբան  
Դժվար ե, յերկար  
Շատերի համար:

Ձվարթ գարունքին,  
Յերգին ու ծաղկին  
Դպրոցի ճամբան  
Կարճ ե, դուրալի  
Կարձես ավելի:

Իսկ ով սեր ունի  
Ինձ պես ուսումի,  
Դպրոցի ճամբան  
Միշտ կարճ ե, սիրուն,  
Ձմեռ, թե գարուն:

ՏՂԱՆ ՅԵՎ ՍԱՌՈՒՅՑԸ

Դպրոցի ճամբին՝ մի տղա  
Սառույցի վրայով սղղաց,  
Բայց ընկավ նա յերեսնիվար,  
Պատահում ե ինչ իմանար...  
Յերբ վեր կացավ՝ խիստ վշտացած՝  
Նա սառույցին այսպես ասաց.

— Սառույց, գիտե՞ս, վատն ես դու,  
Վտանգում ես դու մարդու,  
Սակայն կարճ ե կյանքդ հիմի,  
Շուտով գարուն կլինի,  
Հալչելով ջուր կդառնաս,  
Վոր մեծ գետին միանաս:

Մ. Ա. ՍԱԲԻՐ

3014  
38



ՄԱՆՈՒԿՆ ՈՒ ԶՅՈՒՆԸ

— Ճերմակ փաթիլ,  
Սիրուն թիթեռ,  
Քեզ ով բերեց  
Յերկիրը մեր:

— Յես արցունքի  
Շիթ եմ սառած,  
Ցրտից սառել  
Ընկել եմ ցած:

Այն մոխրագույն  
Ամպը վոր կա,  
Իմ սիրասուն  
Մայրիկն է նա:

Յուրտ է այնտեղ  
Բուք ու բորան  
Արեն այնտեղ  
Մուժում կորավ:

Ու հեկեկաց  
Մայրս հանկարծ,  
Շատ արցունքներ  
Հողմահալած:

Ու նրանց հետ  
Ցրտից սառած՝  
Յես ել ընկա  
Յերկնքից ցած:

— Ասա ապա՝  
Ինչից է, վոր  
Թեվեր ունես  
Ասեղնավոր:

— Ճամբեն գալիս  
Գրկեցին ինձ  
Բյուրեղիկներ  
Հազարավոր:

— Ճերմակ փաթիլ,  
Սիրուն թիթեռ,  
Իջի՛ր, իջի՛ր,  
Յերկիրը մեր:

Իջի՛ր անթիվ  
Քույրերիդ հետ.  
Գարունը գա  
Կդառնաք յետ:

Իսկ հիմա ցուրտ  
Յերկնքի տակ,  
Դաշտում հյուսեք  
Ճերմակ վերմակ:

Տաքացրեք  
Ցորեն, գարի—  
Դարնանն առատ  
Թող հաց լինի:

Գ. ՍԱՐՅԱՆ

ԶՅՈՒՆ

Զյուն, փափուկ ձյուն, սպիտակ ձյուն,  
Զգույշ իջի՛ր դաշտերին,  
Ծաղիկները մտել են քուն,  
Հողն է նրանց անկողին:

Հանդարտ, կամաց իջի՛ր այնպես,  
Վոր ծաղկունքը չարթնանան,  
Ծածկի՛ր նրանց քնքուշ ու հեղ,  
Զգույշ, զգույշ անսահման:

Զյուն, փափուկ ձյուն, սպիտակ ձյուն,  
Հանգիստ, խաղաղ իջի՛ր վար,  
Ծաղիկները մտել են քուն,  
Ծաղիկները ցրտահար:

Գ. ՍԱՐՅԱՆ

## ՋՄՌԱՆ ՊԱՏԿԵՐ

Փաթիլ-փաթիլ մաղելով,  
Ջյուն եր գալիս գաշաերում.  
Փաթիլները խաղալով  
Իջնում եյին ու պարում:

Յե՛վ Սուրիկը խնդալով  
Առավ սահնակն իր սիրուն,  
Ընկերներին հավաքեց  
Դաշար գնաց սղղալու:

Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ



## Մ Ա Ն Ո Ւ Շ Ա Կ

Կապույտ գլխով, կանաչ վոտով  
Յես ծաղիկ եմ անուշ հոտով:  
Թեև տունկըս փոքրիկ ե, ցած,  
Արտաներում միշտ թագ կացած,  
Բայց իմ փունջը իբրև լավ գարդ  
Տեսնում ե միշտ ամեն մի մարդ:  
Յես եմ սիրուն գարնան գուշակ,  
Իմ անունն ե մանուշակ:

Գ. ԴՈՂՈՒՅԱՆ

ԱՌԱՎՈՏԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Արեգակը դուրս է յեկել  
Պսպղալով,  
Շողքը յերզից ներս է ընկել  
Շողշողալով.  
Ծիտը ծառին կշկշում է  
Ծվվալով,  
Ձորումն առուն քչքչում է  
Վըշվըշալով.  
Ծույլ աղայի քունն է տարել  
Խրոմփալով  
Տրեխները շունն է տարել  
Մըմըռալով:  
Ղ. Ս.Ղ.Ս.ՅԱ.Ն.

ԿԱՆԱԶ ԱԽՊԵՐ

Ե՛յ, կանաչ ախպեր,  
Ե՛յ, ճանաչ ախպեր,  
Արի, քեզ հետ բեր  
Արևի շողեր.  
Բեր անուշահոտ  
Ծիլ, ծաղիկ ու խոտ,  
Կարկաչուն վըտակ,  
Յերկինք կապուտակ,  
Խատուտիկ հավքեր,  
Ջընգան յերգեր,  
Գառների մայուն,  
Խաղ, ուրախություն.  
Ե՛յ, կանաչ ախպեր,  
Ե՛յ, ճանաչ ախպեր:

ՀՈՎ.Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Ա Ր Ա Գ Ի Լ

Արագիւն բարով յեկար,  
Ե՛յ, արագիւն, բարով յեկար  
Դու մեզ գարնան նշան բերիր  
Մեր սրտերը ուրախ արիր:

Արագիւն, յերբ գնացիր,  
Դու մեզանից յերբ գնացիր,  
Հա՛ փշեցին բուք ու բորան,  
Ծիւ ու ծաղիկ ամեն տարան:

Արագիւն, բարով յեկար,  
Ե՛յ, արագիւն, բարով յեկար.  
Բունըդ շինիր դու մեր ծառին  
Մեզ մոտ մնա՛, ամբողջ տարին:

ՀՈՎ.Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Գ Ա Ր ՈՒ Ն

Ղուար բացվեց մեր աշխարհին  
Ճրղճրղալեն անուշ, անուշ.  
Հովտում առուն խոխոջում և  
Գլգլալեն անուշ-անուշ:  
Քամին բարակ շքնկշքնկում և  
Զրղզրղալեն անուշ-անուշ:  
Կուննէն յեկավ յերամ կապած  
Կրուկրուալեն անուշ-անուշ:  
Կաքավ քարին գիր և կարգում  
Կրղկրղալեն անուշ-անուշ:  
Հարսն ու աղջիկ հանդերն յելան  
Շորորալեն անուշ-անուշ:

ՀՈՎ.Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Ծ Ա Ղ Ի Կ Ն Ե Ր Ի Յ Ե Ր Գ Ը

Մեծ գոյն ընկալի, ճնհարն ընկալի,

Հողը շնչեց, գեփյուռն յեկալի,

Արեն յելալ վառ ճառագած

Հարցմունք արալ հողին հակված:

Արևը.— Սիրուն աղջիկ, ինչ զրկեմ յես:

Աղջիկը.— Յես ծաղիկներ կուզեմ պես-պես:

Արևը.— Այ աղբյուրներ, այ գետակներ,

Սառցի ներքև քնած եք դեռ:

Գուրս յեկեք, դուրս,

Շուտ դեպի լուս,

Նոր աշխուժով

Ու նոր ուժով

Կարկաչեցեք

Ու կանչեցեք

Հողում քնած սիրուններին՝

Ծաղիկներին ու ծիլերին:

Ջրերը.— Վնչ-վնչ, վնչ-վնչ,

Ես ինչքան սուշ...

Քանի քնեք հողի միջին.

Յեկեք ետեղ սարի լանջին,

Աովի ափին, հով ստվերում,

Փայտի տակին, հովիտներում

Կանաչ խոտով,

Անուշ հոտով

Ծիծաղեցեք

Ու ծաղկեցեք:

Ծաղիկները.— Բարև, բարև, կարմիր արև,

Ախ, ինչ լավ ե դեպի վերեվ,

Ազատ, լույս, տաք,

Կապույտ-հասակ

Արևը.— Սիրում եք ինձ:

Ծաղիկները.— Ախ, ենպես եմ սիրում, ենպես,

Ել առանց քեզ չեմ ապրիլ յես:

— Յես քեզ հեռ եմ, ուր վոր գնաս:

— Յես կտխրեմ, վոր հեռանաս...

Արևը.— Այ անուշներ,

Այ քնքուշներ,

Ապրեմ-չապրեմ, բուրեմ-մարեմ.

Բաժակներդ բացեք իմ դեմ,

Հազար գույնի, հազար ձևի,

Պայծառ, ծավի ու ծարավի,—

Լցնեմ շողով,

Գոհար ցողով,

Կյանքի հյուսթով,

Անուշ հոտով,

Այ անուշներ,

Այ քնքուշներ...

Աղջիկը.— Ես ինչ անթիվ ծաղիկներ կան,

Վոսկի դեղին, կարմիր դեղձան,

Մոռ, ծիրանի, ձերմակ, պուտ-պուտ,

Ալ, նարնջի, մավի կապույտ,

Բացվել, լցվել, ծաղկել են վառ

Վողջ ինձ համար, վողջ ինձ համար...

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ



Ծ Ա Ղ Ի Կ Ն

Ծաղիկները մեկ-մեկ բուսան  
Հարյուր հազար գույնով ներկած,  
Լեռ ու հովիտ ծաղիկ դարձան,  
Ծաղկանց ծովը մեղմիկ ծփաց:

Մանուշակը կապույտ գլխով  
Թաք է կացել թփերի տակ,  
Չանգակիկը մեղմ ճոճալով  
Թերն է ներկել կապույտ-սպիտակ:

Սպիտակ հագած հեզ շուշանը  
Փսփսում է զեփյուռի հետ,  
Թերը փռած մարգարիտը  
Որորվում է առաջ ու յետ:

Կարմիր մախմուր, կուրծքը սևիկ,  
Մեն-մենակ է ալ կակաչը,  
Սիպտակ փրփուր, լախաթևիկ  
Բոժոժ էլ կա ծաղկանց մեջը:

Սիրուն վարդի գովքը մնաց,  
Քնքուշ վարդի, կարմիր վարդի.  
Փշերով է շրջապատված,  
Փուշն է սուր-սուր կարմիր վարդի:

Մի անթառամ ծաղիկ էլ կա,  
Ծաղիկների ծաղիկն է նա,  
Նորի նման հինն անթառամ,  
Ամառ, ձմեռ չի չորանա:

Ա.Փ. ԽՆԿՈՅԱՆ

## ԾԻԾԵՌՆԱԿԻՆ

Դու կապուտակ ծովով արի  
Թեթև, թեթև թեվով արի,  
Ծովի փրփուր լանջով արի,  
Գարնան յերգով, կանչով արի...

Արի, արի, սիրուն ծիծեռ,  
Արի, արի, գարուն դու բեր:

Սեվիկ-մեիկ աչիկ ունես,  
Մկրատածն պոչիկ ունես,  
Ծովի փրփուր լանջով արի,  
Գարնան շնչով կանչով արի...

Արի, արի սիրուն ծիծեռ,  
Արի, արի, գարուն դու բեր:

Ա.Թ. ԽՆԿՈՅԱՆ

## Գ Ա Ր Ո Ւ Ն

Անտառը բացվեց հեովում,  
Ջինջ է կամարն ավելի:  
Տեսեք, վարած դաշտերում  
Յեղերը սևին են տալի:

Ու մանկանց ճիչը մարգերում  
Հնչում է այսօր ավելի:  
Գարունն է գալիս թագուն  
Բայց սև է ինքը հիմի:

Են ինչ ձայն է հնչում,—  
Ինքը, գարունը չի՞ նա:  
Վոչ, նուրբ ու հնչյուն  
Աովի խոխոջն է դա:

Ա. ԲԼՈԿ

ՄԱՅԻՍՅԱՆ ՅԵՐԳ

Տերևները կանաչ,  
Յեվ չկա ձմեռ:  
Գնում ենք մաքուր  
Դաշտերով առաջ:

Յեվ յես  
Յեվ դու  
Յեվ մենք:

Գարնան լվացքն և կախվել  
Յեվ չորանում,  
Մենք շահել և ուրախ ենք:  
Գնում,  
Գնում,  
Գնում:

Զթերի, թղթերի վրա,  
Կրակ ամեն բանում:  
Կարմիր դրոշներ ենք ահա  
Տանում,  
Տանում,  
Տանում:

Լվացված գարունքով,  
Փողոցը խնդերես:

Գնում ենք շոկատով  
Յեվ մենք  
Յեվ դու  
Յեվ յես:

ՄԱՅՍՎՈՎՍԿԻ

Գ Ա Ր Ո Ւ Ն

Այսօր ծիծառը ներս թռավ,  
Ծլվլալով ավետեց՝  
«Գարուն յեկավ, գարուն յեկավ» —  
Ճնշված սրտիս հույս տվեց:

Լուսամուտից դուրս նայեցի,  
Փոխված թվաց ամեն ինչ —  
Հողիս ճախրեց թևատարած,  
Սիրտս ճխաց հրճվանքից:

Բույրն զգացի գարնանային,  
Ուժ զգացի առնական,  
Ասի, ինչո՞ւ սիրտս կոտրեմ՝  
Չե՞ վոր մոտ ե ապագան:

Չմոռն ձեռից արդ կադատվեմ,  
Կարժանանամ լավ որի,  
Կտեսնեմ պարը բնության,  
Նրա զարթոնք անձկալի:

Բացված վարդից յես բույր կառնեմ,  
Ինձ կժպտա մանուշակ,  
Յեվ ստիակն ել կզայլայլի  
Իր «տիվ-տիվը» անուշակ:

Ա. Կ. ՆԵՐՍԵՍԵԱՆԻ

ՅԵՍ ԱՅՆ ԵՄ ՍԻՐՈՒՄ

Են՝ վոր կիսահալ սառուցի տակից  
Ժիր վտակներն են հեփհե լողում,  
Են՝ վոր ձյուների վերջին հալոցքից  
Թավիչ, աղվամազ կանաչն ե շողում,  
Են՝ վոր արևի կենսատու շողքից  
Գարնան առաջին ծաղիկն ե ծլում  
Յեվ մանուկի պես արթնացած քնից  
Աչերը ճմլում՝  
Յես այն եմ սիրում:

Են՝ վոր նայում ես սարերի լանջին  
Պուտերի խումբն ե կարմրին տալիս,  
Լսում ես ջահել արտերի միջին  
Արտուտի ազատ կանչը թնդալիս,  
Յեվ այդ հաղթական ցնծալի կանչին  
Տեսնում ես նորեկ ընկեր-թուշուններ  
Արձագանքում են, տալիս վողջույններ  
Սզատ յեթերում՝  
Յես այն եմ սիրում:

Են՝ վոր այդ սրբալիզ գոհունակ ժամին  
Տեսնում ես՝ մեկ ել հյուսիսի կողին  
Շողաց մի փալակ... յետքից ել խրոխտ  
Հեռու, ներդաշնակ մի անուշ վորոտ,

Ուր հոգիդ նույնպես թնդում ե գգում,  
Վոր այն վորոտից անձրև ե գալու,  
Ողբ մաքրելու ու մեզ բերելու

Ցանկալի գարուն՝  
Հենց այն եմ սիրում:

ՀԱԿՈՒՔ ՀԱԿՈՒՔՅԱՆ

## Գ Ա Ր Ո Ւ Ն

Զուգվել են կրկին  
Անտառ ու այգի,  
Վշտում ե ուժգին  
Զուրը գետակի:

Հավքերը սիրուն  
Համերգ են կազմել,  
Արտում ու դաշտում  
Յերգ ու հորովել:

Թիթեռներն ուրախ  
Թռչում են դես-դեն...  
Զան, տեսքիդ մատաղ,  
Գարուն ե արդեն:

Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

## ՍԱՐՅԱԿԻ ՏՈՒՆԸ

Սարյակները մեր հերվան  
Ես ուր վոր ե պիտի գան,  
Բայց տնակը հնացած  
Պետք չի գալու ել նրանց:

Կարեն, արի միասին  
Նոր տուն շինենք սարյակին,  
Թե չե՛ տեսնի տուն չկա,  
Ել մեր բակին մոտ չի գա:

Վորդ ու թրթուր զանազան,  
Յես ի՛նչ գիտեմ, ել ի՛նչ բան,  
Ներս կմտնեն մեր այգին,  
Վնաս կտան ահագին:

Դե, վեր գնա մուրճը բեր,  
Յես ել տախտակ ու մեխեր:

Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

## ԾԱՌԱՏՈՒՆԿ

Փոս ենք փորում  
Ծառ ենք տնկում  
Ուրախ յերգով ու կանչով  
Վոր մեծանա  
Ու ճյուղեր տա,  
Ծածկվի սիրուն կանաչով:

Ու յերբ ամրան  
Արևը գա  
Իր շողերով շողշողուն,  
Ծառը սիրով հանգիստ կտա  
Մեզ իր անուշ սավերում:

Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԻՆՉ ՍԻՐՈՒՆ Ե

Ի՜նչ սիրուն ե անուշ գարնան  
Խենթ ու խելառ են քամին,  
Վար սուլում ե կտրի վրա,  
Թխթխկացնում ապակին:

Ի՜նչ անուշ ե սիրուն գարնան  
Են անձրևը խելագար,  
Կակտում ե կտրի վրա  
Մերթ կամացուկ, մերթ վարար:

Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԾԻՇԵՌՆԱԿ

— Մայրիկ, նայիր ծիծեռնակին,  
Նուրբ շուղերից նրա բնին:  
Ինչքան լավ ե, ինչքան սիրո՞ւն.  
Յերբ վոր բացվում ե նոր գարուն,  
Գիտես, նա մեզ չի մոռանում,  
Գալիս մեզ մոտ—բուն ե շինում:  
Նրա կտուցը քիչ կոր ե, տես,  
Նախշունիկ ե սիրունատես,  
Չար աչքերը տնկած վրան՝  
Բայց չի սիրում փխտն նրան:  
— Սիրիր, բալիկ, ծիծեռնակին  
Ու ձեռք մի տա նրա բնին,  
Հավաքում ե նա արտերից՝  
Վնասատու միջատներին:

Ա. ԱՎԴՍԼ

ԳԱՐՆԱՆ ՈՐԵՐ՝

Յեկեք, գարնան ջինջ որեր,  
Տարվա անուշ, լավ որեր,  
Սարում, ձորում, պարտիզում՝  
Հալեցրեք ձյունը խխում:  
Գետերը թող վարարեն,  
Արտաները դալարեն,  
Ծլի ցորենը թել-թել,  
Ծաղկեն ծառերն ու վարդեր,  
Տերևները կանաչեն  
Յեվ աղբյուրները հնչեն:

Մ. Ս. ՍՍԲԻՐ՝

Ո՛Վ ԵՄ ՅԵՍ

Յես բերել եմ ձեզ գարուն,  
Գարնան աղջիկն եմ սիրուն.  
Քնից նոր եմ արթնացել,  
Թերթիկներս ել դեռ թաց են:

Հիշում եք, չե՞, աշուն եր,  
Չար քամին ձեզ քշում եր,  
Այն ժամանակ յես հողում  
Մրսում եյի, դողդողում:  
Յես մի փոքրիկ սերմի հատ,  
Յուրա քամու դեմ հուսահատ  
Մնացի յես մենակ, խեղճ  
Չոր, ամայի դաշտի մեջ:  
Ու մի որ ել յես հողում,  
Տեսնեմ, վոր ձյուն ե մաղում:

— Վայ, կռիվ ե,—ասացի—  
Ու կռվի մեջ մնացի.  
Չյունը փոեց տաք վերմակ.  
Իմ հազին ել մի բարակ  
Շապիկ ունեմ, մի կեղև  
Տեսնես՝ հիմի վորտեղ ե:

Սյուպես անցավ ժամանակ,  
Յես մնացի ձյունի տակ.  
Անցք բաց արի իմ շապկից



Դուրս նայեցի այդ անցքից:  
Տեսնեմ՝ ձյունը ջուր դառած,  
Կաթկթում է վերից ցած:  
Հասկացա, վոր մեր շող-շող  
Պայծառ արևն է հաղթող:  
Մի որ ել յերբ վոր յելա,  
Արեգակն եր ինձ վրա.  
Տեսնեմ արոտ ու հերկեր  
Տեղ-տեղ կանաչ են ներկվել:

Հնյ, Հնյ, գարնն է, գարնն,  
Ուրախ կանչում է առուն:  
— Ջան-Ջան,— կանչում են հավքեր,  
Ուրախ յերգով ենք յեկել:  
— Հնյ-Հնյ,— հովը շնկշնկաց,  
Ու սարերից իջավ ցած:

Այսպես իրար յետևից,  
Ամեն մեկը իր տեղից,  
Ջայն եր տալիս ու կանչում  
Յերգում, ցնծում, կարկաչում:  
Դե, ո՞վ եմ յես—իմացն՞ք,  
Ի՞նչպես ցրտին դիմացա...

Գ. ՍԱՐՅԱՆ

## Մ Ա Ր Տ Ը

Ա՛խ, եսպէս ել գիժ ամիս.  
Մարդու հանգիստ չի տալիս:  
Եսոր ուրախ որ կանի,  
Վաղը անձրև ու քամի,  
Առավոտը պայծառ ող,  
Կեսորը մութ ու ամպոտ:  
Մին հագնում է սպիտակ,  
Մին կանաչին է տալիս,  
Մի որ ցուրտ է, մի որ տաք,  
Մին խնդում է, մին լալիս...  
Ա՛խ, եսպէս ել գիժ ամիս:

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ



## ԱՂԲՅՈՒՐԸ

Մարի լանջին ժայռի տակ,  
Ջուր եր բըխում սառնորակ  
Ու ցրվելով խոտերում  
Իգուր ճահիճ եր դառնում:

Նրա առջև մի խոր գուշ  
Շինեց հովիտն ու անուշ  
Խաղ ասելով նա տարավ  
Ջրեց հոտը իր ծարավ:

Անցվորն յեկավ տոթակեզ,  
Սառն աղբյուրին վոր հասավ,  
Գլխարկն առավ ու չոքեց՝  
Խմեց՝ սիրտը հովացավ:

Ու տվավ իր որհնանքը  
Անցվոր մարդը են բարի  
«Քո շինողի որ-կյանքը  
Ջրի նման յերկարի»...

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Գ Ե Տ Ա Կ Ը

— Ո՞ւր ես վազում  
Այդպես արագ,  
Ա՛յ դո՛ւ կայտառ  
Սիրուն գետակ.  
Կանգ առ, խաղանք  
Ես ծառի տակ:

«Ձե, փոքրիկըս,  
Գնամ պիտի.  
Տես, ջաղացը  
Գյուղի մոտի.  
Պետք է ուժ տամ,  
Վոր պըտըտի:

Ցածն ել հովտում  
Անուշահոտ  
Ինձ են մնում  
Ծաղիկ ու խոտ,  
Հոգնած ծարավ  
Տավարն ու հոտ:

Դե, տեսնո՞ւմ ես,  
Մնաս բարով.  
Ճամփաս ցանած  
Հազար գործով  
Դադար չունեմ  
Յես մինչև ծով»:

ՀՈՎ.Է. ԹՈՒՄԱՆԹԱՆ

Կ Ա Ղ Ն ՈՒ Տ Ն Վ Ո Ր Ն Ե Ր Ը

Մեր ծեր կաղնին իր հին տունը  
Տվել է չորս տնվորի:  
Արմատի մոտ՝ ներքնատունը  
Մուկն է բռնել այս տարի:

Ատաղձագործ ժիր փայտփորը՝  
Ցածի հարկի խանութում  
Աշխատում է ամբողջ ուրը —  
Թակում, կտցում, ծակոտում:

Իսկ վերևի հարկում նեղլիկ  
Շեկ սկյուռն է բնակվում՝  
Կաղին, ընկույզ, սերմ ու հատիկ  
Դիզած իր լի փշակում:

Թավ ճյուղքումը դրել է բուն  
Մի զել յերգիչ դուրալի  
Ու ճվլում է որն ի բուն  
Իր յերգերը սրտալի:

## Ա Մ Ա Ռ

Ամառ եւ Կարծես կրակ ե բարձրանում  
Գետնի յերեսից և հուրհրատում.  
Վոչ շունն ե հաջում, վոչ ճրճին յերգում,  
Գորտն ել ե լռել, ել չի կռկռում:  
Ամենքն ել փախել, հով տեղ են գտել՝  
Իրենց բներում լռել, պապանձվել:  
Միայն մի հատիկ մարդ ե յերևում  
Խոր ընկած դաշտում, ապի լեզերքում:  
Կանգնած ե մարդը արևի տակին,  
Վտան ու ծունկը բաց, բաճն իր ուսին,  
Մի շապիկ միայն ունի նա հագին  
Յեզ մի սպիտակ թասակ կա գլխին:  
— Բայց ի՞նչ մարդ ե նա և ի՞նչ ե շինում,  
Արևի տակին ի՞նչու յե ալրվում:  
— Նա բոստանչին ե. բոստանն ե ջրում,  
Սեխն ու ձմերուկը նա յե հասցնում:

Գ. Ա. Գ. Ա. Յ. Ն.

## Հ Ն Ձ Վ Ո Ր Ն Ե Ր

(ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՆ)

Ահա յեկավ խոտ հարողը,  
Ուսին դրած գերանդին.  
Բոլոր խոտը նա հարել ե,  
Բան չի թողել մեր հանդին:  
— Այ խոտ հարող, ասա տեսներք,  
Դու ի՞նչպես ես խոտ հարում.  
— Այսպես ահա, լավ նախեցեք,  
Յես այսպես եմ խոտ հարում:  
Հեպ, հոպ,  
Հեպ, հոպ:  
— Ա՛խ, ինչ լավ ե, լեկեք սովորենք,  
Մենք ել այսպես խոտ հարենք —  
Հեպ, հոպ,  
Հեպ, հոպ:

\* \* \*

Ահա յեկավ մեր հնձողը,  
Ձեռքին փայտե մասնոցներ.  
Պատրաստել ե սուր մանգաղը  
Պետք ե հնձի մեր արտեր:  
— Հնձող յեղբայր, ասա տեսներք  
Դու ի՞նչպես ես հուճնձ անում.

— Այսպես ահա, լավ նայեցեք,  
Յես այսպես եմ հունձ անում:

Հեպ, հոպ,

Հեպ, հոպ:

— Ախ, ինչ լավ ե, յեկեք սովորենք,  
Մենք ել այսպես հունձ անենք.

Հեպ, հոպ,

Հեպ, հոպ:

Ղ. ԱՂԱՅԱՆ

## ԶԱՆԳԱԿ ԾԱՂԻԿՆԵՐ

Զանգակիկներ, դաշտերի  
Սիրունիկ ծաղիկներ,  
Ի՞նչ եք այդպես ինձ նայում  
Ծաղիկներ կապտագույն:  
Յե՛վ ինչո՞ւ չեք դուք ախուր  
Մայիսվա վառ որին,  
Գլխիկներդ որորում  
Զհնձված խոտերում:  
Իմ նժույզը նետի պես  
Սլանում ե դաշտով,  
Տրորում ե անխնա  
Ձեզ իր կոշտ սմբակով:  
Զանգակիկներ, դաշտերի  
Սիրունիկ ծաղիկներ,  
Դուք չե՞րբեք ինձ չանիծեք,  
Զանգակիկ ծաղիկներ:  
Ձեզ չեմ ուզում տրորել,  
Զանգակիկ ծաղիկներ.  
Բայց արշավը սրընթաց  
Ձեմ կարող կանգնեցնել.  
Սլանում եմ նետի պես,  
Փոշի յե բարձրանում,  
Բայց չգիտեմ դեպի ուր՝  
Նժույզս ե տանում:

Այնտեղ, ուր վոր գետի վրա  
Ուտիններն են կռացել,  
Վորտեղ ամուսն արևը վառ  
Այրող շողերն ե գցել:

Վորտեղ կայտառ ճպուռները  
Թռչկոտում են ու պարում,  
Յե՛վ խմբովին յերգ են ասում  
Սիրուն կանաչ խոտերում:

Սիրուն մանկիկ, մոտեցիր՝ մեզ  
Յե՛վ սովորիր դու պարել,  
Դե, մոտեցիր, շուտ մոտեցիր,  
Քանի մայրդ չի դարձնել:

Կանաչ խոտերն են դողդողում,  
Ինչքան տաք ե, ինչքան լավ,  
Մենք փիրուզե մեջքեր ունենք  
Յե՛վ թևիկներ պլպլան:

Մենք գանազան յերգեր գիտենք,  
Քեզ սիրում ենք, մանկիկ, շատ:  
Նայիր, ափերն են գառիվեր,  
Յե՛վ ավազոտ հունը՝ հարթ:

Ա. ՏՈՒՍՏՈՅ

Ա Մ Ա Ռ

— Ռ՛ւֆ, տաք ե, հայրիկ,  
Խաղալ չի լինում.  
Կարծես վերևից  
Կրակ ե թափվում:

Ես չար ամառն ե  
Եսպես տաքացնում  
Ձեռք ու յերեսըս  
Այրում, սեվացնում:

Հայրիկ ջան, ցուրտը,  
Ձմեռը լավ եր.  
Ա՛խ, յերանի թե  
Ամառ չլիներ:

— Եղպես չե, Սուրբիկ,  
Ձմեռ թե ամառ  
Յերկուան ել լավ են,  
Պետք են մեզ համար:

Սպիտակ ձմեռը  
Ճերմակ վերմակով  
Բույսի արմատն ե  
Պահում ապահով:

Կանաչ ամառը  
Եսպես տաքացնում  
Վողջ պտուղներն ե  
Հասունացնում:

Ծիրան, սերկեվիլ,  
Անուշիկ խնձոր,  
Տանձ, խաղող, տխիլ,  
Նուռ, դեղձ ու սալոր,—

Յորեն, թու՛թ ու թու՛զ,  
Կեռաս հյու՛թալի  
Բամբակ, խոտ, ընկու՛յզ  
Ամառն ե տալիս...

Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Ա Մ Ա Ռ

Յեկավ ամառ  
Արեվառ,  
Բերավ մրգեր  
Մեզ համար,  
Կարմիր կեռաս  
Ու սալոր,  
Կարմիր խնձոր,  
Մեղրածոր,  
Տանձեր մեծ-մեծ  
Ու դեղին,  
Թուխ հյութալի  
Յեվ կաղին:  
Բա ծիրանը  
Են վոսկի,  
Համը տեսել ես  
Իսկի,  
Բա խաղողը  
Քթոցով...  
Ել ինչ ասեմ, մրգի ծով...

Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Ա Մ Ր Ա Ն Ը

Յողուն ե տվել	Փշում ե ուժգին
Յորենը արտում,	Քամին խելազար,
Յողուն ե տվել	Են բարձր սարից՝
Ու հասկը բռնել,	Արծվի գահից,—
Յելել ե քամին	Սոսկում ե դողում
Ու մենամարտում,	Ամեն թուփ ու ծառ,
Արտը արմատից	Դողում, դողդողում
Ուզում ե հանել:	Գիժ քամու անից:

Հասկերը խմբով  
Քամուց չեն վախում  
Մեջք-մեջքի տված  
Գնում են-գալիս.  
Գնում են-գալիս  
Իրար պաշտպանում,  
Գիժ քամու առաջ  
Իրար ուժ տալիս:

ՀԱԿՈՒ ԱՂԱԲԱԲ



## ԳՆԱՆՔ ԼՈՂԱՆԱՆՔ

— Պայծառ ու տաք յեղանակ:  
Գետը գնանք յողանանք:

Չուչիկ, դու ել մեզ հետ յեկ՝  
Չափ-չափ անենք ու պարենք:

Հաֆ-հաֆ, հաֆ-հաֆ մի մտիկ,  
Վողջ տղերքը անշապիկ:

Իսկ տղերքը միասին  
Դեպի անտառ վազեցին,

Իսկ Չուչիկը վախեցած,  
Ափից նայում է նրանց:

Չուրը գլխով է տալիս  
Պինդ բռնել է գերանից:

Չարածճի Չուչիկին  
Բերին՝ գետը գցեցին:

Վճնց է թրջվել Չուչիկը՝  
Վեր է ցցել ղնչիկը:

Մ. ԿԼՈՎՈՎՍ.

## ՅԵՐԳ ԽՈՏՀԱՐՔԻ

1

Հեռներ կապույտ ու հսկա,  
Յերկիրնք անամպ, փիրուզյա,  
Ջրեր պայծառ ու վճիտ,  
Ծաղկաբուրյան դաշտ, հովիտ:  
Ու դաշտերում այդ արձակ՝  
Քանի նախիր, յերամակ  
Արածում են ու խայտում  
Արշալույսից իրիկուն:

2

Արևի տակ վառվողն՝  
Մեր բրիգադն է մաքառում,—  
Խոտ ենք հնձում միասին  
Յես, Իվանը ու Մոսին,  
Իսկ Նատաշան ու Նելլին  
Նստած ձիափոցներին,  
Առույգ ու ժիր աշխատում—  
Հնձած խոտն են հավաքում:

Ո, ինչ քաղցր է ու խնդուն  
Մեր կոլխոզի խոտհարքում:

Հեովում հանգավ վառ արփին,  
 Գարձանք վրան խնդագին.  
 Նվագներով դուրեկան  
 Ահա հնչեց գարմոշկան,  
 Պար են գալիս Նատաշան,  
 Սեվաչ Մարոն ու Միշան  
 Իսկ յես իմ ժիր Նելլու հետ  
 Ընթերցում եմ գիրք ու թերթ:

Ո, ինչ լավ է ու անուշ  
 Յերեկոյան վրանում:

Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ

### ԲՁԵՁԻ ԴՊՐՈՑԸ

Վարպետ Բրդեզն ամրան մի որ  
 Դպրոց բացեց մեծ ծառի տակ  
 Ու հավաքեց թիթեռ, ճանճ, բոռ,  
 Մըժեղ, մըջյուն, մըլակ, մոծակ...

— Գիտե՞ք, ասավ, իմ փոքրիկներ,  
 Պիտի սովրեք, սովրեք անվերջ,  
 Վոր իմանաք ինչ է ձեզ պետք,  
 Ինչ կա ձեր շուրջն ու կյանքի մեջ:

Պիտի սովրեք, սովրեք ենքան,  
 Մինչև դառնաք ինձ պես վարպետ:  
 Դե, նըստեցեք հիմի հանդարտ,  
 Ինչ վոր կասեմ կրկնեք ինձ հետ:

Ա. Անթառամ, Բ. Բարձմենակ.  
 Գ. Գաղտիկուռ, Դ. Դըղում...  
 Ե՛յ, դու մորեխ, դեսն ախանջ դիր,  
 Ի՛նչ ես եղտեղ կըրտում:

Յե. Յերիցուկ, Զ. Զանազան.  
 Ե. Եշխըրտուկ, Ը. Ընկուզ...  
 Մի աղսկեք, հանաք հո չի.  
 Թիթեռ՝ հանգիստ, մոծակ՝ սուս:

Մի խառնվեք, չեմ սիրում յես  
Եղպես ազմուկ, աղաղակ:  
Թ. Թըրթնջուկ, Ժ. Ժախ ու Բոխ,  
Ի. Իշաովույտ, Լ. Լեղակ:

Խ. Խնձորուկ, Ծ. Ծիրանի,  
Կ. Կըռթուկ, Հ. Հաղարջ...  
— Տես, վարժապետ, ես մըլակին,  
Ինձ ասում ե՛ս սարի արջ:

— Այ տղա, էյ, չեն հայհոյիլ,  
Տըզզան հիմար անասուն...  
Ձ. Ձմերուկ, Ղ. Ղանձլամեր,  
Ճ. Ճարճատուկ, Մ. Մասուր:

Դնւ, էլ Ծղրիդ, վո՞նց ես նստել  
Գըլուխդ—լետ, մեջքդ - դուրս:  
«Յ» Յունապի\*), Ն. Նունուֆար,  
Շ. Շաղանակ, «Ո» Ողկուզ\*):

Վսյ, ես ինչէր կան դասերում,  
Վողկուզը յես շատ եմ սիրում...  
— Իսկ յես կաղամբ կուտեմ-կուտեմ...  
— Իսկ յես՝ ծիրան...— Իսկ յես՝ կոտեմ...

— Ձեզ չեն հարցնում՝ ինչ կուտեք դուք  
Քընաթաթախ՝ առտեհան:  
Ձ. Ձինարի, Պ. Պատատուկ,  
Ձ. Ձըրկոտեմ, Ռ. Ռեհան:

\*) Հին ուղղագրութեամբ:

Ս. Սերկեվիլ, Վ. Վարդենի,  
Տ. Տերեփուկ, Յ. Յաքի...  
Ռ՛ւհ, մարդ քարից պիտի լինի,  
Ձեր մեջ գլուխ կըճաքի:

Փ. Փըրփրուկ, Բ. Բարասոխ,  
Ո. ՈՖ, պըծանք վերջապես...»  
Դե՞ գնացեք, վաղը կգաք  
Անգիր արած ջրի պես:

Ու հավաքած թիթեռ, ճանճ, բոռ,  
Մժեղ, մըրջուհ, մըլակ, մոծակ,  
Վարպետ Բգեղն ամուսն եսպես  
Դաս եր տալի մի ծառի տակ:

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ



Ա Շ Ո Ւ Ն

Դեղնած դաշտերին  
Իջել ե աշուն,  
Անտառը կրկին  
Ներկել ե նախշուն:  
Պաղ-պաղ մրգի հետ  
Փշում ե քամին,  
Քշում ե տանում  
Տերեր գեղին:  
Տըխուր հանդերից  
Ամենքը տրտում  
Քաշվում են կամաց  
Իրենց տունն ու բուն:

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

## ՏԵՐԵՎԱԹԱՓ

«Ա՛յ փոքրիկներ, այ սիրուններ»,  
Ասավ քամին տերևներին, —  
«Աշունն յեկավ, մոտ է՝ ձմեռ,  
Ի՞նչ եք դողում ծառի ծերին:

Վոսկի, դեղին, վառ ծիրանի  
Գույներ հագեք խայտաբղետ  
Ու ճյուղերից ձեր մայրենի  
Յեկեք ինձ հետ, փախեք ինձ հետ...  
Յեկեք տանեմ հեշտ ու անթե,  
Անհետ ճամփով, անհայտ տեղեր,  
Ձեք իմանա այսուհետև  
Ել ինչ է դող, ինչ է ձմեռ...»

Տերևները հենց լսեցին,  
Նախշուն-նախշուն գույներ հագան,  
Սըվսըվալով տխուր յերգեր՝  
Քամու թևին թռան, փախան:

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

## ԱՇՆԱՆ ՎԵՐՁԸ

Սարի լանջին,  
Մեզի միջում  
Խոխոջում է  
Ու աըրաընջում  
Ջուրը բարակ,  
Ջուրը տխուր.  
— Վաշ-վիշ, վաշ-վիշ,  
Ո՛ւր կորան, ո՛ւր,  
Տերև ու խոտ,  
Վարդը շաղոտ,  
Սարվորն ուրախ,  
Սրինգ ու խաղ:  
Շուրջըս դատարկ,  
Շուրջըս տխուր...  
Վաշ-վիշ, վաշ-վիշ,  
Ո՛ւր կորան, ո՛ւր:

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

«ՅԵՎԳԵՆԻ ՈՆԵԳԻՆ»-ԻՑ

Յերկիրն արդեն աշուն եր շնչում,  
Արեն արդեն սակավ եր փայլում,  
Յերեկն սկսեց արդեն կարճանալ,  
Մութ անտառների շվաքն անփայլ  
Բացվեց, մերկացավ տխուր աղմուկով:  
Յեվ մեզն եր իջնում դաշտերի վրա,  
Ճշան սագերի յերամն ահա  
Զգվել եր հարավ: Գալու յեր շուտով  
Տխուր յեղանակ, ձանձրալի, ամպոտ՝  
Նոյեմբերն եր այդ, կանգնած դռան մոտ:

Արշալույսն եր ցուրտ մշուշում բացվում,  
Արտերում հնձի աղմուկն ե լուում,  
Ընկերուհու հետ քաղցած, ցրտահար,  
Գայլն ե դուրս գալիս կածանի վրա:  
Նրան տեսնելով ձին ե խրխնջում,  
Ճամբորդն ել զգուշ առաջ ե թռչում  
Սարն ի վեր արագ հասնում մի շնչում:  
Յեվ այգաբացին հովիվն ե լուում,  
Կովերին գոմից ել դուրս չի քշում,  
Յեվ միջոդեյին, կազմած շրջանակ,  
Նրանց չի կանչում փողով իր բարակ:  
Խրճիթում նստած աղջիկն ե յերգում,  
Յեվ հետն ել մանում. — գիշերվա ընկեր  
Ճրագն ե ճիթում, վառվում ե յերեր:

Ճայթում են արդեն բուր սառնամանիք:  
Արծաթով պատում դաշտերն ամայի:  
Յեվ տղաների ժողովուրդն ուրախ,  
Սառույցն ե կտրում սահոնով անվախ:  
Կարմիր թաթերով, գերացած մի սագ  
Ջրերում ուզեց նորից լողանալ,  
Մայթաքեց, ընկավ: Թռչում ե արագ,  
Փայլում պտտվում ձյունն առաջին,  
Աստղերի նման թափվում ե ավիւն:

Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆ

ՀՈՎԿԻ ՀՐԱԺԵՇՏԸ

Մնաք բարով, դուք, արտաներ սիրուն,  
Ամառն անց կացավ, հոտն իջնում է տուն:

Մենք կգանք ձեզ մոտ նորեկ գարունքին,  
Յերբ զարթնեն ուրախ յերգերը կրկին,  
Յերբ վոր սարերը զուգվեն կանաչով,  
Յերբ վոր ջրերը վազեն կարկաչով...

Մնաք բարով, դուք, արտաներ սիրուն,  
Ամառն անց կացավ, հոտն իջնում է տուն:

Ֆ. ՇԻՂԵՐ

ՇՈՒԿԱՆ ԱՇԵԱՆԸ

Զարդարվել է  
Մեր շուկան.

Ինչեր ասես,  
Վոր չկան.

Տանձ ու խնձոր,  
Սերկեպիլ,

Փշատ ընկույզ  
Յե՛վ տխիլ.

Բա խաղողը  
Գու՛ննդգու՛յն,

Ալ ու կարժիր,  
Վոսկեգու՛յն,

Բա են դեղին  
Գազարը,

Վոր նախշել է  
Բազարը,

Բա են դեղ-դեղ  
Կանաչին

Խանութների  
Առաջին...

Վոր մեկն  
Ասեմ.

Մեր շուկան  
Աննաման է,  
Գովական:

Հ. ՀԱՅՐ ԱՊԵՏՅԱՆ



Ա Շ Ո Ւ Ն

Դաշտ ու այգի դեղին հագան,  
Ծառ ու ծաղիկ մերկացան,  
Թռչունները յերամ-յերամ,  
Մեր աշխարհից հեռացան:

Որը մռայլ, ցուրտ ու տխուր,  
Բարակ անձրև է մաղում.  
Մեզն է պատել սար ու բլուր  
Ել մարդ չկա դաշտերում:

Սև ագռավը ծառի վրից  
Չմռան յերգն է կրոկոում  
Մարդ, անասուն տուն ու բնից  
Ծերուկ հյուրին սպասում:

Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Ա Շ Ն Ա Ն Ը

Տերևները քամու հետ  
Պար են բռնել առաջ, յետ,  
Խշխշում են ու յերգում  
Մեր զարդարված պուրակում,  
— Գալդ բարի, այ աշուն.  
Ի՞նչ սիրուն ես, ի՞նչ նախշուն:

Գետակը գիժ ու պղտոր  
Շտապում է դեպի ձոր  
Քչքչալով ձորակում  
Փրփրում է ու յերգում.  
— Յես գնացի, շուն աշուն,  
Ի՞նչ սիրուն ես, ի՞նչ նախշուն:

Կունկները կոկոսն  
Կոկոսով վեր թռան  
Դեպի հարավ ձգվեցին  
Կոկոսացին, լերգեցին,  
— Մնաս բարով, լավ աշուն.  
Ի՞նչ սիրուն ես, ի՞նչ նախշուն:

Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

**ԾԻՏՆ ՈՒ ԾԻԾԵՌՆԱԿԸ**

Ծիծեռնակը աշունքին  
 Յեկավ, ասաց ծիտիկին  
 — Յեկ քեզ տանեմ տաք հարավ:  
 Ուր չես յեղել դու բնավ:  
 Մնաս եստեղ ի՞նչ անես,  
 Վոչ կեր ունես, վոչ պաշար,  
 Վոչ ել բուռդ ե հարմար:  
 — Ե՛հ, բան չունես, քույրիկ ջան,—  
 Ասաց ծիտը ճկճկան.—  
 Ի՞նչպես գնամ հեռու տեղ  
 Թևեր չունեմ յես ուժեղ:  
 Յեվ ո՞վ կտա հարավում,  
 Մի տաք անկյուն՝ իր բնում:  
 Հացի փշրանք, կամ ձավար  
 Բավական ե ինձ համար:  
 Հոկտեմբերիկ, պիոներ,  
 Թե տղա, թե աղջիկներ,  
 Չմրան սաստիկ որերին  
 Կուշտ կեր կտան ծտերին:  
 Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ



**ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1. Չորս յեղանակ Դ. Աղայան	3
<b>ՉՄԵՌ</b>	
2. Չմեղա իրիկունը—Ա. Ս. Պուշկին (Թարգմ. Հովհ. Թումանյան)	7
3. Առաջին ձյունը (Թարգմ. Հովհ. Թումանյան)	9
4. Մի բաց նամակ ամենքին.—(փոխ. Հովհ. Թումանյան)	10
5. Ծաղիկները - (փոխ. Հովհ. Թումանյան)	11
6. Փոքրիկ գյուղացին—Ն. Նեկրասով (փոխ. Աթ. Խնկոյան)	12
7. Ճպուռն ու մըջյունը—Կսիլով (փոխ. Աթ. Խնկոյան)	13
8. Չմեռ Աթ. Խնկոյան	15
9. Դպրոցի ճամբան	16
10. Տղան և սասուլյը—Մ. Ա. Սարիբ (Թարգմ. Վեսպեր)	17
11. Մանուկն ու ձյունը—Գ. Սարյան	18
12. Չյուն—Գ. Սարյան	19
13. Չմռան պատկեր—Հ. Մուրադյան	20
<b>ԳԱՐՈՒՆ</b>	
14. Մանուշակ—Ռ. Պատկանյան	23
15. Առավոտը գյուղում—Դ. Աղայան	24
16. Կանաչ ախպեր—Հովհ. Թումանյան	25
17. Արագիլ—Հովհ. Թումանյան	26
18. Գարուն—Հովհ. Թումանյան	27
19. Ծաղիկների յերգը—Հովհ. Թումանյան	28
20. Ծաղիկներ—Աթ. Խնկոյան	30
21. Ծիծեռնակին—Աթ. Խնկոյան	32
22. Գարուն—Ա. Բլոկ. (Թարգմ. ուսերենից)	33
23. Մայիսյան յերգ—Մայակովսկի (Թարգմ. Վեսպեր)	34
24. Գարուն—Ակակի Ծերեթելի (Թարգմ. Հ. Կարապետյան)	36

625

25. Յես այն եմ սիրում—Հակոբ Հակոբյան	37
26. Գարուն—Հ. Հայրապետյան	39
27. Սարյակի տունը—Հ. Հայրապետյան	40
28. Ծառատունկ—Հ. Հայրապետյան	41
29. Ինչ սիրուն է—Հ. Հայրապետյան	42
30. Ծիծեռնակ—Ս. Ավդալ (Թարգմ. Վեպեր)	43
31. Գարնան սրեր.—Մ. Ա. Սարխ (Թարգմ. Վեպեր)	44
32. Ո՞վ եմ յես—Գեղամ Սարյան	45
33. Մարտը—(փոխադր. Հովհ. Թումանյան)	47

ԱՄԱՌ

34. Ազրյուր—Հովհ. Թումանյան	51
35. Գետակը—Հովհ. Թումանյան	52
36. Կաղնու անվտրները	53
37. Ամառ—Ղ. Աղայան	54
38. Հնձվորները—Ղ. Աղայան	55
39. Զանգակ ծաղիկներ—Ս. Տոլստոյ (Թարգմ. Հ. Հայրապետյան)	57
40. * *—Ս. Տոլստոյ (Թարգմ. Հ. Հայրապետյան)	58
41. Ամառ—Հ. Հայրապետյան	59
42. Ամառ—Հ. Հայրապետյան	60
43. Ամրանը—Հ. Աղաբաբ	61
44. Գնանք լողանանք.—Մ. Կլոկովա (Թարգմ. Հ. Հայրապետյան)	62
45. Յերգ խտհարքի—Ս. Մանուկյան	63
46. Բզեզի դպրոցը—(փոխադր. Հովհ. Թումանյան)	65

ԱՇՈՒՆ

47. Աշուն—(Թարգմ. Հովհ. Թումանյան)	71
48. Տերեփաթափ—(փոխադր. Հովհ. Թումանյան)	72
49. Աշնան վերջը—Հովհ. Թումանյան	73
50. «Յեկզեհի Ոնեգին»-ից—Ս. Ա. Պուշկին (Թարգմ. Հա. Պոգոսյան)	74
51. Հովվի հրաժեշտը—Ֆ. Շիլլեր (Թարգմ. Հովհ. Թումանյան)	76
52. Շուկան աշնանը—Հ. Հայրապետյան	77
53. Աշուն—Հ. Հայրապետյան	78
54. Աշնանը—Հ. Հայրապետյան	79
55. Ծիան ու ծիծեռնակը—Հ. Հայրապետյան	80

Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան  
Սրբազրիչ՝ Հ. Մանուկյան

Գլխավորի փառո՞ղ Դ.—3607. Հրատ 4195.

Պատվեր 189. Տիրած 5000.

Թուղթ 62x94 Տղադր. 51 մամ.

Մեկ մամ. 24 480 նշան.

Հանձնված է արտոգրության 29 փետրվարի 1938 թ.

Ստորագրված է ամբարտնաթյան համար 16 ապրիլի 1638 թ.

Գ.Բ.Ն. Ո. 204

Պատրաստի ապարան, Յերեան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0399818

10465

ԳԻՆԸ 1 Դ. 20 Կ.

СТИХОТВОРЕНИЯ  
ГИЗ АРМ. ССР, ЕРЕВАН